

նագոյն է, ասոր համար ոչ այնչափ յարգի (տես Աւիրիկէ, էջ 517)։

Յովաննէս Թիւթիւնճի Սուաքինէն իր ճամբան կը շարունակէ տակաւին 20 օր, միշտ ծովով, և կը հասնի Մուսուլա (հիմա Մասուա) ծանօթ քաղաքը, կղզիի մը վրայ շինուած, ուր այն ատեն կը նստէր թուրք փաշա մը։ Այդ կղզիէն դուրս՝ ան ոեւէ իշխանութիւն չունէր, վասնզի հանդիպակաց արաբական եզերքը՝ եմէն և հապէշական եզերքի ցեղերը հազիւ կ'ընդունէին Օսմ. գերիշխանութիւնը (տող 20-24)։

Ադոնց (Աւիրիկէ, էջ 517-Տ) նոյնպէս կը հաստատէ, թէ Մուսուլա (իր ուղղագրութեամբ) ամրոց մըն էր փոքրիկ կղզիի մը վրայ, մօտիկը ցամաքին, ուր առաջ կը նստէր այս նահանգին փաշան (ինչպէս Յովաննէս Թիւթիւնճիի հոն հանդիպած ատեն), բայց 1802ին ձիառէ փոխադրուած էր։ Այս քաղաքը կը կարծուի ըլլալ հին աշխարհագիրներու Պսլումայիս Թեւոնը, զոր շինել տուած էր Պաղոմէոս Եղբայրասէր՝ փիղերու որսորդութեան իբր կայան։

Մասուա վերջին 60-70 տարիներուն ստացաւ մեծ կարեւորութիւն, վասնզի իտալական Երիթրէա գաղթավայրին նաւահանգիստն էր, երկաթուղագիծով կապուած Ասմարայի, որ գլխաւոր քաղաքն էր Երիթրէայի։ Բնակիչներուն թիւը կը հաշուուէր 1917ին 12271, որոնցմէ 137ը միայն եւրոպացի։ Մասուա նաև Հասէշիստանի հիւսիսային մասին համար կը ներկատուի նաւահանգիստ և հաղորդակցութեան ճամբայ։ Այս նաւահանգիստէն կ'արտածուի կաշի, կարագ, բամպակ և սուրճ. կը ներածուի մետաքս, բամպակեղէն կերպաններ։

Այս քաղաքը գրաւած էր Խալիլ Իսմայիլ փաշա և կցած Եգիպտոսի, բայց անգլ. գրաւումէն յետոյ